

§ 6. Զանազան կարծիքներ Դաւթի անձի մասին և դրանց քննութիւնը.

§ 7. Մահմանք Իմաստասիրութեան երկը և Ներածութեան ու Վերլուծականքի մեկնութիւնները թարգմանուած են յունարէնից.

§ 8. Նորպղատոնական Դաւիթ մեկնիչը Աղէքսանդրիայում ուսած Զ-րդ դարի մատենագիր է.

§ 9. Նորպղատոնական Դաւիթ մեկնիչը քրիստոնեայ է.

§ 10. Նոննոսին վերագրուած առասպելաբանական մեկնութիւնների հեղինակը Դաւիթ մեկնիչը չէ.

Անկասկած գիտական աշխարհում ուշագրութիւն և գնահատութիւն կը գտնեն այդ եզրակացութիւնները: Ուրախակի է որ էջմիածնում կազմակերպուած է գիտութեամբ լուրջ պարապող մարդկանց մի փոքրիկ խումբ:

Na.

Գորի՝ «Հեռման եւ Դորոքէա», գերմանեէնից թարգմանեց Յարութիւն Պետրոսեան, Վաղարշապատ, 1904 թ., գինն է 40 կոպ.

Գերմանացի հռչակաւոր մտածող-բանաստեղծի այս գրուածքը երրորդ անգամ է թարգմանուած հայերէն. այս վերջին թարգմանութիւնը տարբերում է իր նախորդներից նրանով, որ կատարուած է տաղաչափութեամբ և ոչ արձակ: Թարգմանութեան կցուած են միքանի կարեւոր ծանօթութիւններ, լեզուն բաւական սահուն է, չափը ներդաշնակ: Իբրեւ «առաջին փորձ» անպայման աջող է պ. Յարութիւն Պետրոսեանի այս թարգմանութիւնը:

Na.

«Զիււմու բնար», հատոր երկրորդ, Վաղարշապատ, 1904, գինն է 50 կոպ.

Գիշ անգամ «աշուղ» համեստ անուանը կապուած է եղել այդ աստիճան խոշոր յեղափոխիչ դեր, որքան այդ վիճակուեց Զիււմուն: Նրա անունը իրաւացի կերպով կապուած է մեր նորագոյն պատմութեան ամենահետաքրքիր էպոխայի հետ: Զիւււանին հրապարակ եկաւ ճիշտ ժամանակին:

Ժողովրդական առաջնականդ աշուղներ մեզանում երբէք